

Հավելված N__
Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման նախարար, փոխվարչապետի
2011 թվականի _____ ի «___» -ի N -Ա հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. [ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ](#)
2. [ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ](#)
3. [ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ](#)
4. [ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ](#)
5. [ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ](#)
 - 5.1. Կրթություն
 - 5.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդություն
 - 5.3. Առողջապահություն
 - 5.4. Սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն
 - 5.5 պաշտպանություն
6. [ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ](#)
7. [ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ](#)
8. [ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ](#)
9. [ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ](#)
10. [ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ](#)
11. [ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ](#)
12. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
 - 12.1. Տարածքային կառավարում
 - 12.2. Տեղական ինքնակառավարում
 - 12.3. Քաղաքացիական հասարակություն
13. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
14. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
15. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ
16. [ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ \(ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔ\)](#)

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՌ	Ազգային անվտանգության ռազմավարություն
ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿՁԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԱԿ ՀՊԾ	ՄԱԿ-ի համաշխարհային պարենի ծրագիր
ՄՁԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄՁԳ	Միջազգային զարգացման գործակալություն
ՄՁՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական
ՄՁԾ	զարգացման ծրագիր
ՄՎ	Մոնիտորինգ և վերլուծություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայության տեղական գրասենյակ
ՏԱՊ	2010 թվականի տարեկան աշխատանքային պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոն

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N782-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը: Որոշման 3-րդ կետով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին հանձնարարվել է մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 10-ը մշակել ՄԶԾ տարեկան աշխատանքային պլանը և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝ հաստատման (1-ին ենթակետ), ինչպես նաև որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ապահովել համայնքների, հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների ակտիվ մասնակցությունը (2-րդ ենթակետ):

Սույն տարեկան աշխատանքային պլանը կազմվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N782-Ն որոշման: Տարեկան աշխատանքային պլանի նպատակն է ապահովել տվյալ տարվա համար ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումների իրականացումը: ՏԱՊ-ն ամփոփում է պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները:

Սույն տարեկան աշխատանքային պլանը կազմված է 2011 թվականի համար՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հաստատված պետական բյուջեի և ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային և այլ կազմակերպությունների կողմից Սյունիքի մարզում 2011 թվականին նախատեսվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ մարզպետարանին տրամադրված տեղեկատվությունը:

ՏԱՊ-ի նպատակներն են.

- 1) Հնարավոր բոլոր ռեսուրսների համախմբումը ՄԶԾ-ով նախատեսվող 2011 թվականին իրականացվելիք միջոցառումների իրականացման համար
- 2) Նախատեսվող միջոցառումների շաղկապումը ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ
- 3) Միջոցառումների իրականացման ցուցանիշների և արդյունքների ներառումը տրամաբանական հենքում
- 4) Հնարավորության դեպքում միջոցառումների իրականացման ժամկետների՝ ըստ եռամսյակների և դրանց իրականացման համար պատասխանատու կազմակերպությունների սահմանումը
- 5) Դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունների սահմանումը:

ՏԱՊ-ում ներկայացվում են 2011 թվականի այն միջոցառումները, որոնց իրականացման ընթացքին հետևելու է հիմնականում Սյունիքի մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են ՄԶԾ-ի իրականացման մոնիտորինգի աշխատանքները:

ՏԱՊ-ի բովանդակությունը կազմվել է համաձայն ՄԶԾ-ում տրված գլուխների: Սկսած ՏԱՊ-ի 3-րդ բաժնից մինչև 16-րդ բաժինը ներառյալ բոլոր վերնագրերը համապատասխանեցված են ՄԶԾ գլուխներին: Նախատեսվող միջոցառումները ներկայացված են «16.Հավելվածներ (տրամաբանական հենք)» բաժնում արձանագրված 2011 թվականի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքում:

ՏԱՊ-ն ըստ ոլորտների կազմել են ՀՀ Սյունիքի մարզպետի 2009թ. փետրվարի 11-ի N25-Ա որոշմամբ ստեղծված ոլորտային աշխատանքային յոթ խմբերը, իսկ ՏԱՊ-ի իրագործմանը հետևելու են Սյունիքի մարզային զարգացման հանձնաժողովը, մարզի զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը:

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2011թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- 1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
- 2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
- 3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
- 4) Արդյունաբերության զարգացում
- 5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
- 6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
- 7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
- 9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
- 10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
- 11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
- 12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
- 13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
- 14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
- 15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄԸ

ՄԶԾ-ում բավարար կերպով տրված է աղքատության գնահատումը Սյունիքի մարզում և նախանշված են դրա հաղթահարմանն ուղղված միջոցառումները:

2011 թվականին նույնպես բնակչության բարեկեցության աճը և աղքատության դեմ ուղղված պայքարը կմնան որպես ՀՀ կառավարության և երկրի քաղաքացիական հասարակության կարևորագույն և հրատապ խնդիրներ:

ՄԶԾ-ով նախատեսված քաղաքականությունների փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է մարզի մասշտաբով նախանշված գերակա ուղղություններ, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային կառավարման բարեփոխումներին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին, հանրության մասնակցության ու մոնիտորինգի մեխանիզմների ներդրմանը: ՄԶԾ-ը, հիմք ընդունելով ԿԶԾ-ի սկզբունքներն ու ռազմավարությունը, նպատակ է հետապնդում բացահայտել մարզում աղքատությունը պայմանավորող հիմնական գործոնները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները և դրանց հիման վրա նախանշել աղքատության հաղթահարման ռազմավարությունն ու համապատասխան միջոցառումները: 2011 թվականին աղքատության խնդիրները Սյունիքի մարզում կշարունակեն որոշակի լուծումներ ստանալ:

ՀՀ Սյունիքի մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա 2011 թվականի համար նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի եկամտային և մարդկային աղքատության հաղթահարմանը.

- 1) ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացում
- 2) Սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում
- 3) Արդյունաբերության և էներգետիկայի զարգացում
- 4) Գյուղատնտեսության զարգացում
- 5) Բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում
- 6) Զբոսաշրջության զարգացում
- 7) Քաղաքաշինական ծրագրերի իրականացում
- 8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների կառուցում, բարելավում
- 9) Տարածքային կառավարման և տեղական ինքակառավարման արդյունավետ մեխանիզմների կիրառում
- 10) Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների արդյունավետ պաշտպանություն:

4. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ մարզում 2011թ. իրականացվող աշխատանքներն ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի հետևյալն է.

- 1) Աջակցություն մարզի ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացմանը
- 2) Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն
- 3) ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդմանն աջակցություն
- 4) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
- 5) Ուսուցողական աջակցության ծրագիր:

Նշված ուղղությունների ֆինանսավորման հարցը դեռևս հստակեցման փուլում է: Այս նպատակներին հասնելու համար կարևորվում է ՓՄՁ ԶԱԿ-ի Սյունիքի մարզի ներկայացուցչությունների, մարզպետարանի, մարզի խորհրդի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական աջակցությունն ու մասնակցությունը գործընթացին:

Կարևոր է շեշտը դնել հատկապես ՓՄՁ աջակցության տարեկան պլանում գյուղական համայնքների շահառուների տեսակարար կշռի մեծացման վրա:

Կարևորվում է նաև սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, լիցենզավորման, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցաբերումը:

Անհրաժեշտ է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

ՀՀ վարչապետի ղեկավարությամբ ստեղծված օպերատիվ շտաբի կողմից 2010թ. ընթացքում հաստատվել է «Էլեն Անի» ՍՊԸ-ի «Բազալտե իրերի արտադրության ներդրումային ծրագիրը»: Կյանքի կոչելով նմանատիպ ծրագրեր հնարավորություն կստեղծվի արդյունավետ օգտագործելու մարզի բնական ռեսուրսները, մարզում ստեղծելով նոր աշխատատեղեր և ավելացնելով արտադրության ծավալները:

Մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործմամբ 2011թ. նախատեսվում է

կառուցել և շահագործել 15 նոր փոքր ՀԷԿ-եր, որի համար կներդրվեն շուրջ 2.737 մլրդ դրամ գումարներ:

2011թ. մարզում միջազգային կազմակերպությունների և բանկերի միջոցներով նախատեսվում է իրականացնել 3893.9 մլն դրամի վարկային ծրագրեր, որից մանր և միջին բիզնեսի զարգացմանը կուղղվեն շուրջ 1468.0 մլն դրամ, իսկ գյուղատնտեսության զարգացմանը՝ 2426.0 մլն դրամ վարկային միջոցներ:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ՓՄՁ ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
1. ՓՄՁ և մասնավոր հատված	0.0	6,630,900.0	6,630,900.0
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե			0.0
միջազգային կազմակերպություններ և բանկեր/վարկային միջոցներ/		3,893,900.0	3,893,900.0
համայնքային բյուջե			0.0
մասնավոր ներդրողներ		2,737,000.0	2,737,000.0

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

5.1. Կրթություն

Ելնելով մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվելու միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանն ու ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-րդ դասարանի նոր ծրագրերի չափորոշիչների և դասագրքերի, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի ներդրմանը: 2011 թվականի ընթացքում կրթության ազգային ինստիտուտի միջոցով կազմակերպվելու են ուսուցիչների նախատեստեստացիոն, դպրոցի տնօրենների հավակնորդների հավաստագրման վերապատրաստման դասընթացներ: Լուրջ աշխատանքներ են իրականացվելու հատուկ կրթական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելու ուղղությամբ: Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունն ուղղված է լինելու՝ մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Հանրակրթական դպրոցներում չկան պայմաններ և հնարավորություններ հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաներին ներառելու համար, որն էլ լուրջ խնդիր է մարզում աշխարհագրական տարածվածության պատճառով:

2011 թվականին ՄԶԾ-ով առաջարկվում է շարունակել դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների և դաստիարակների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման, մարզում մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված ծրագիրը:

Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները, մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ուսուցիչների առաջին ատեստավորումն իրականացնելու նպատակով կկազմվեն առաջնահերթ խնդիրներ ներկայացնող փաստաթղթերի ձևակերպումները, դրանք նախօրոք կհամաձայնեցվեն ՀՀ ԿԳՆ հետ: Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներն ու ժամանակացույցը տարեսկզբին նախապատրաստական լուրջ աշխատանքներ կիրականացվեն դպրոցի տնօրենների վերապատրաստում և ատեստավորում իրականացնելու համար:

2011թվականի պետական բյուջեով մարզի կրթական 4 դպրոցների և ուսումնական հաստատությունների հիմնանորոգման համար նախատեսվում է 356,933 մլն դրամ, որից՝ 130,0 մլն դրամ՝ «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման, 50,0 մլն դրամ՝ «Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման, 76,933 մլն դրամ՝ Կապանի թիվ 2 և 100,0 մլն դրամ՝ Սիսիանի ավագ դպրոցների համար:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին 2011թ. մարզում նախատեսվում է իրականացնել շուրջ 146300.0 ԱՄՆ դոլարի ներդրումներ:

Մասնավորապես՝

- 1 դպրոցի բակի և մերձակա ավտոբուսային կանգառի շահագործում, 1 դպրոցի հանդիսությունների սրահի բեմահարթակի կառուցում, 1 դպրոցի հանդիսությունների սրահի մասնակի վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում, 1 դպրոցի կահույքի և տեխնիկական սարքավորումների տրամադրում: Ծրագրի ներդրման ֆինանսական արժեքը կազմում է մոտ 12.000 ԱՄՆ դոլար
- Կիրակնօրյա դպրոցի բացում 1 գյուղական համայնքում, քրիստոնեական կրթության կազմակերպում եկեղեցու կողմից, Կապանի և Մեղրիի կիրակնօրյա դպրոցներին կահույքի և տեխնիկայի տրամադրում, <<Տիկնիկ>> հ/կ-ին կահույքի և տիկնիկների հատկացում: Ծրագրի ներդրման ֆինանսական արժեքը կազմում է 6700.0 ԱՄՆ դոլար
- 24 և այլ համայնքներում Սուրբ Ծննդի, Զատիկի տոնակատարությունների կազմակերպման համար նախատեսվում է ներդնել 17000.0 ԱՄՆ դոլար
- 24 համայնքների ուսուցիչների, աշակերտների և ծնողների համար նախատեսվում է դասընթացների կազմակերպում՝ առողջ ապրելակերպի և հիվանդությունների կանխարգելման, նույն համայնքների դպրոցների ուսուցիչների համար՝ «Սեռական դաստիարակություն», «Առողջ ապրելակերպ» և «Վարքագծային փոփոխություններ» թեմաներով: 2 ծրագրերի ներդրման ֆինանսական արժեքը կազմում է 3700 ԱՄՆ դոլար
- Դասավանդման համագործակցային և մանկավարժական նոր մեթոդների ուսուցումը ներդնելու և կատարելագործելու նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին ՏԶԾ 24 համայնքի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների դաստիարակների և ուսուցիչների համար նախատեսվել է ուսուցման նոր մեթոդների վերաբերյալ դասընթացների կազմակերպում և անցկացում, որի ծրագրային արժեքը կազմում է 2000.0 ԱՄՆ դոլար
- Աշակերտական խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետության բարձրացման նպատակով մարզի 10 համայնքների դպրոցների աշակերտական խորհուրդների անդամների հետ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին նախատեսվում է դասընթացների կազմակերպում և անցկացում, նաև աջակցության ցուցաբերում նույն համակազմին՝ առնվազն 2 ծրագրերի նախաձեռնության իրականացման համար: Ծրագրի ներդրման ֆինանսական արժեքը կազմում է 19500.0 ԱՄՆ դոլար

- Մարզի սոցիալապես առավել անապահով, ծնողազուրկ, բազմազավակ ընտանիքների 260 երեխաների ամառային հանգստի կազմակերպում մանկական առողջարարական և ամառային ճամբարներում, ինչպես նաև հանգստի այլ գոտիներում: Նախատեսվում է Ստեփանավանի արտակարգ իրավիճակների ճամբարում կապանցի 20 երեխայի մասնակցության ապահովումը: Ծրագրի ներդրման ֆինանսական արժեքը ՏԶԾ 24 և գյուղական համայնքների /ընտրությունը կկատարվի ամռանը/ «Կանաչ ճամբարներ»-ի համար կազմում է 37400.0 ԱՄՆ դոլար
- Հատուկ կրթության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման առավել նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին նախատեսվում է մարզի 4 հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության արմատավորում, երեխաների ֆիզիկական կարիքի համապատասխան շինարարական (թեքահարթակների, սանհանգույցների համապատասխանեցման) որոշ աշխատանքների իրականացում: Ծրագրի ներդրման ֆինանսական արժեքը կազմում է 10000.0 ԱՄՆ դոլար
- Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է Կապան քաղաքի ՆՈՒՀ-երին տրամադրել խմելու ջրի ֆիլտրեր, 1 գյուղական համայնքի մանկապարտեզի խաղահրապարակն վերանորոգել: Ծրագրի ներդրման ընդհանուր արժեքը կազմում է 6000.0 ԱՄՆ դոլար
- Նախադպրոցական հաստատությունների ջեռուցման խնդրի լուծման նպատակով 2011 թվականին «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին նախատեսվել է մարզի 1 ՆՈՒՀ – ում աշխատանքներն իրականացնելու համար ներդնել 8000.0 ԱՄՆ դոլար
- Նախադպրոցական հաստատությունների ուսումնանյութական բազայի թարմացման և խաղահրապարակների կահավորման նպատակով նախատեսվում է մարզի 2 գյուղական համայնքների ՆՈՒՀ-երին կարուսելների, 5 ՆՈՒՀ-երին՝ կահույքի և խաղալիքների, 2 ՆՈՒՀ-երին՝ տեխնիկական սարքավորումների տրամադրում, նաև գույքի և դիտակտիկ նյութերի հատկացում: Ծրագրի ներդրման ֆինանսական արժեքը կազմում է 19000.0 ԱՄՆ դոլար
- Նախադպրոցական այլընտրանքային ծառայությունների մատուցում, մասնավորապես՝ աջակցություն 5 համայնքների մանկապարտեզների օժանդակ տնտեսությունների ստեղծմանը: Ծրագրերի ներդրման ընդհանուր ֆինանսական արժեքը կազմում է 5000.0 ԱՄՆ դոլար:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով կրթության ոլորտում 2011թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել էր իրականացնել կրթական օբյեկտների կառուցում ծրագրով 4 դպրոցների կառուցում, գումարով՝ 483.5 մլն դրամ և կրթական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով 49 դպրոցների հիմնանորոգում, գումարով՝ 3146.9 մլն դրամ: Նշված ծրագրերից 2011թ. ՀՀ պետական բյուջեով հաստատվել են 5 ուսումնական հաստատությունների

հիմնանորոգման ծրագրերը 377.613 մլն դրամ գումարով, որից՝ 130,0 մլն դրամ՝ «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման, 50,0 մլն դրամ՝ «Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման, 76,933 մլն դրամ՝ Կապանի թիվ 2 և 100,0 մլն դրամ՝ Սիսիանի ավագ դպրոցների հիմնանորոգման և 20.68 մլն դրամ Աճանանի դպրոցի տանիքի վերանորոգման համար:

2011թ. ՏԱՊ-ով նախատեսվում են իրականացնել նաև ՄԶԾ-ով չնախատեսված միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես <<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ>> ՄԲԿ-ի միջոցների հաշվին 33.7 մլն դրամ գումարով նախատեսվում է իրականացնել նախադպրոցական և դպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում և ուսուցողական ծրագրերի իրականացում:

Համայնքային բյուջեներով 2011թ. նախատեսվում է իրականացնել 12.2 մլն դրամի ներդրումներ:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կրթության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Կրթություն	3,630,390.0	423,539.0	-3,206,851.00
որից՝			
ՀՀ պետական բյուջե	3,630,390.0	377,613.0	-3,252,777.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ		33,726.0	33,726.00
համայնքային բյուջե		12,200.0	12,200.00
մասնավոր ներդրողներ			0.00

5.2. Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր

2011 թվականին մշակույթի և սպորտի բնագավառում մարզպետարանի գործունեությունը կնպատակաուղղվի մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մշակույթի դերի բարձրացմանը, պետական, ազգային և այլ տոների, ազգային ծեսերի ու ծիսակարարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության պահպանությանը, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, կադրային քաղաքականության և մշակութային

կրթության զարգացմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Տարվա ընթացքում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կկազմակերպվեն և կիրականացվեն ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հորեյաններ, տարելիցներ, փառատոներ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, գիտաժողովներ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ:

Մարզական և մշակութային միջոցառումների իրականացման նպատակով 2011թ.պետական բյուջեով նախատեսվում է 7,171 մլն դրամ գումարի ծախս: Ակնկալվում է նաև այլ դոնորների մասնակցությունը միջոցառումների իրագործման գործում: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի միջոցների հաշվին նախատեսվում է մարզի մի շարք համայնքներում «Սուրբ Ծննդյան և Սուրբ Զատիկի >> տոների կազմակերպում 4,32 մլն դրամի շրջանակներում:

Անհրաժեշտ աշխատանքներ կիրականացվեն մարզի մշակույթի և սպորտային, մշակութային կրթական հաստատությունների աշխատանքների կազմակերպման, մշակութային և մարզական կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման ուղղությամբ:

«Այունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով մշակույթի ոլորտում 2011թ. «պետական բյուջեի միջոցներով նախատեսվել էր իրականացնել մշակութային օբյեկտների հիմնանորոգում ծրագրով 6 մշակութային օբյեկտների հիմնանորոգում, գումարով՝ 483.0 մլն դրամ: Նշված ծրագրերից 2011թ. «պետական բյուջեով հաստատվել են 5 մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծրագրերը 307.6 մլն դրամ գումարով, որից՝ Գորիսի Ա. Բակունցի անվան տուն թանգարանի համար 30,0 մլն դրամ և Վ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի համար՝ 17,58 մլն դրամ, Կապանի երկրագիտական թանգարանի համար՝ 81.12 մլն դրամ, Մեղրիի մշակույթի տան համար՝ 41.12 մլն դրամ և Գորիսի Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգման համար՝ 25.8 մլն դրամ, Գորիսի թատրոնի շենքի ջեռուցման համակարգի վերականգնման աշխատանքները՝ 10,0 մլն դրամ, Անգեղակոթի մշակույթի տան վերանորոգման համար՝ 45.3 մլն դրամ, Խնձորեսկի մշակույթի տան վերանորոգման համար՝ 45.2 մլն դրամ գումարի շրջանակներում:

2011թ. ՏԱՊ-ով նախատեսվում է իրականացնել նաև ՄԶԾ-ով չնախատեսված միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ-ի ծրագրով մարզի որոշ համայնքներում նախատեսվում է հիմնել խաղահրապարակներ, մարզադաշտեր, տեղադրել խաղասարքեր ներդնելով 15,85 մլն դրամ, Կապան քաղաքի մի քանի թաղամասերում ստեղծել հանգստի գոտիներ նախատեսելով 6,48 մլն դրամ:

Համայնքային բյուջեներով 2011թ. նախատեսվում է իրականացնել 30.2 մլն դրամի ներդրումներ:

Համեմատական
ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի
մշակույթի ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային
պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Մշակույթ և սպորտ	483,000.0	360,179.5	-122,820.50
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	483,000.0	307,611.0	-175,389.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ		22,332.0	22,332.00
համայնքային բյուջե		30,236.5	30,236.50
մասնավոր ներդրողներ			0.00

5.3. Առողջապահություն

Ամբողջությամբ իրագործելով ՀՀ կառավարության քաղաքականությունը և 2011թ. ծրագրով նախատեսված միջոցառումները՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանը ուշադրություն է դարձնելու մարզի տարածաշրջաններում գործող առողջապահական կառույցների համաչափ զարգացմանը, բնագավառում ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործմանը, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, ծննդօգնության որակի ու մատչելիության բարձրացմանը: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, բրուցելյոզի, տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ուղղություններն ու նրանց

համապատասխան մշակված միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

2011 թվականին նախատեսվում է իրականացնել շտապ օգնության և մանկական հիվանդանոցային բուժօգնության արդիականացումը:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվում բուժօժանոցայինությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակի իրագործման ռազմավարությունը կայանում է նախ՝ բժշկական արդյունավետության բարձր մակարդակի հասնելու մեջ, որը ներառում է առողջության առաջնային պահպանման ծառայությունների բարելավում, արտահիվանդանոցային, հիվանդանոցային մասնագիտական բուժօգնության որակի և մատչելիության բարձրացում և՛ առաջնային և երկրորդային մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող հաստատությունների նյութատեխնիկական և կադրային ռեսուրսների բարելավում, ինչպես նաև համակարգի կառավարման բարելավմանն ուղղված բարեփոխումները:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորման հաստատված ծավալը կկազմի 1639.96 մլն դրամ, այդ թվում հիվանդանոցային բուժօգնության գծով՝ 820.0 մլն դրամ, արտահիվանդանոցային, հերիարտորիկ բուժօգնության գծով՝ 819.96 մլն դրամ:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից վարկային ծրագրի շրջանակներում 2011 թվականին կիրականացվի «Կապանի ԲԿ» ՓԲԸ 2007 թվականի օպտիմալացման ծրագրով նախատեսված թերապևտիկ մասնաշենքի վերակառուցումը, կշարունակվի «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով մանկական մասնաշենքի հիմնանորոգումը՝ 125.0 մլն դրամ, կմեկնարկեն «Մեղրու տարածաշրջանային ԲԿ» ՓԲԸ նոր մասնաշենքի նախագծային աշխատանքները, որի նախնական հաշվարկները կազմում են մոտ 1.0 մլն. դրամ

Կիրականացվեն նաև մի շարք կրթական և ուսուցողական միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներով: Մասնավորապես «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից 2011թ. 48850.0 ԱՄՆ դոլարի ներդրումներ:

«Տուբերկուլոզի դեմ պայքարի» նպատակային ծրագրի շրջանակներում կշարունակվի ԱԱՊ ոլորտում գործող բժիշկների և բուժքույրերի կրթումը:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից «Շտապ օգնության արդիականացում» և «Մանկական հիվանդանոցային բուժօգնության բարելավում» վարկային ծրագրերի շրջանակներում կշարունակվի նշված օղակներում աշխատող անձնակազմի շարունակական կրթումը:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով առողջապահության ոլորտում 2011թ. նախատեսվել էր իրականացնել առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով 6 առողջապահական օբյեկտների հիմնանորոգում՝ 1113.3 մլն դրամ, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորում՝ 2229.1 մլն դրամ, շտապ օգնության կայանների

վերագինում՝ 50.0 մլն դրամ և մարզի գյուղական ամբուլատորիաների նկատմամբ տարբերակված մոտեցում՝ 12.0 մլն դրամ գումարներով: Նշված ծրագրերից պետական բյուջեով պետք է իրականացվեր 2519.1 մլն դրամի, դոնորների միջոցներով և այլ աղբյուրներով 885.3 մլն դրամի աշխատանքներ:

2011թ. ՏԱՊ-ում չեն ներառվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջապահական համակարգի ֆինանսավորման գումարը՝ 1639.96 մլն դրամ:

2011թ. «Ա պետական բյուջեով կիրականացվի մոր և մանկան բժշկական ծառայության ծրագիր՝ 334.9 մլն դրամով: Դոնորների միջոցներով և այլ աղբյուրներով 2011թ. ներդրումների չափը կկազմի 258.8 մլն դրամ:

Համեմատական

«Ա Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի առողջապահության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Առողջապահություն	3,404,420.1	2,911,716.5	-492,703.60
որից՝			
«Ա պետական բյուջե	2,519,120.0	2,652,886.5	133,766.50
միջազգային կազմակերպություններ և դոնորներ	885,300.1	258,830.0	-626,470.10
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

5.4. Սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն

2011թ. մարզում սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների

համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով:

2011թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է իրականացնել 61000.0 հազ. դրամ վարձատրվող հասարակական աշխատանքներ: Նշված ծրագրերի իրականացման միջոցով հնարավոր կլինի բարձրացնել զբաղվածության արդյունավետությունը, մեծացնելու գործազուրկների համար աշխատանքի հնարավորությունները:

Մարզի գերակա խնդիրներից մեկը մնում է սոցիալապես անապահով խավի բնակարանային ապահովության խնդիրը: 2011թ. Գորիս քաղաքում կսկսվի 22 բնակարանոց շենքի կառուցումը: Շենքի շինարարության սկիզբը դրվել է 2010թ. դեկտեմբերի 20-ին:

Մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

- 1) Հաշմանդամների տվյալների տեղեկատվական բանկի և հանրապետական ցանցի ստեղծումը
- 2) Հաշմանդամների համար շրջակա միջավայրի մատչելիության ապահովումը
- 3) Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային սպասարկման համակարգի ընդլայնումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը
- 4) Փախստականներին հասարակությանը ինտեգրվելու, ինչպես նաև բնակարանով ապահովելու ծրագրերի իրագործումը
- 5) Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը
- 6) ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՄՄՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդրումը
- 7) Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը
- 8) Դժվար իրավիճակում հայտնված երեխաներին ուղղված բազմաբնույթ ծառայությունների ապահովում:

Նշված միջոցառումների իրականացման համար ակնկալվում է պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

ՀՀ Այունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով սոցիալական ապահովության ոլորտում 2011թ. նախատեսվել էր իրականացնել քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեք հարթակների կառուցում՝ 1.0 մլն դրամ, համակարգչի, պատվածառողի, կար ու ձևի ուսուցման կազմակերպում՝ 1.012 մլն դրամ, աշխատավարձի փոխհատուցում գործատուին, հաշմանդամին աշխատանքի տեղավորման նպատակով՝ 8.4 մլն դրամ և Գորիսում առողջակրթական, վերականգնողական կենտրոնի ստեղծում 10.0 մլն դրամ գումարներով: Նշված ծրագրերից ՀՀ պետական բյուջեով նախատեսվում էր

իրականացնել 10.412 մլն դրամի ծրագրեր, իսկ դոնորների միջոցներով՝ 10.0 մլն դրամի ծրագրեր: Նշված աշխատանքները ներառվել են 2011թ. ՏԱՊ-ում:

2011թ. ՏԱՊ-ով նախատեսվում է իրականացնել նաև ՄՁԾ-ով չնախատեսված միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից՝ 331.0 մլն դրամ:

Համեմատական

ՀՀ Այունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի սոցիալական պաշտպանության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
<i>Սոցիալական պաշտպանություն և երեխաների պաշտպանություն որից՝</i>	20,412.0	401,412.0	381,000.00
ՀՀ պետական բյուջե	10,412.0	70,412.0	60,000.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ	10,000.0	331,000.0	321,000.00
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

6. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ՀՀ Սյունիքի մարզում Արդյունաբերության և էներգետիկայի բնագավառում 2011 թվականին նախատեսվում է ստեղծել նոր ձեռնարկություններ՝ մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործմամբ, փոքր ՀԷԿ-եր կառուցելով և շահագործելով, հանքագործական արդյունաբերության զարգացմամբ, ինչպես նաև տեղական հումքի վերամշակման, սննդի արտադրության և մարզի թեթև արդյունաբերության (առկա պոտենցիալի օգտագործմամբ) ձեռնարկություններ վերաբացելով:

- 1) «Լեռ-էքս» ՍՊԸ-ն հիմնադրվել է 1999 թվականին, զբաղվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ, իրականացրել է երկրաբանական-հետախուզական աշխատանքներ: 7500.0 մլն. դրամ լրացուցիչ ներդրումից հետո 2010 թվականին ընդլայնվեց «Լեռ-էքս» ՍՊԸ-ին պատկանող Հանքասարի պղնձամոլիբդենային կոմբինատը: Ստեղծվել են շուրջ 200 նոր աշխատատեղեր: Ստորգետնյա հանքուղին պատրաստված է և պիտանի է շահագործման, ապահովված է էլեկտրասնուցումը, կառուցված են ավտոճանապարհները և աշխատանքային հրարապարակները: Ֆաբրիկայի համար նախատեսվող տարածքի հողային աշխատանքները ավարտված են ձեռք են բերվել որոշակի սարքավորումներ և մեխանիզմներ: 2011թ. կշարունակվեն հզորությունների ավելացման աշխատանքները, աշխատատեղերի թիվը կհասցվի մինչև 550 աշխատատեղի: Ծրագրի ընդլայնումը կնպաստի Գեղիի ենթաշրջանի փախստականաբնակ գյուղական բնակավայրերի արտագաղթի նվազմանը
- 2) 2011թ. շուրջ 75.0 մլն դրամ ներդրումներ են կիրականացվեն <<Քարաշեն ցեմենտ>> ՍՊԸ-ի ստեղծման ուղղությամբ: 2011թ. դոնորների ներգրավմամբ նախատեսվում է ընդլայնել գործարանի հզորությունները և ստեղծել շուրջ 30 նոր աշխատատեղեր
- 3) «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի հենքի վրա 2011-2012 թվականներին նախատեսվում է պղնձի խտանյութի հիդրոմետալուրգիական եղանակով վերամշակման գործարանի շահագործում Քաջարանում՝ մոտ 500 նոր աշխատատեղով
- 4) Արաքս գետի վրա նախատեսվում է կառուցել Մեղրիի ՀԷԿ-ը (մոտ 140 ՄՎտ հզորությամբ և շուրջ 800 մլն.կՎտ.ժ էլ.էներգիայի տարեկան արտադրությամբ): Հիդրոէլեկտրակայանի կառուցման ծրագիրը իրականացվում է Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հետ համատեղ: Ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը կկազմի 208.9 մլն եվրո, 2011թ. ֆինանսավորման չափը կկազմի շուրջ 47.42 մլն. Եվրո
- 5) ՀՀ Սյունիքի մարզի եւ Հայ-կանադական առետրաարդյունաբերական պալատի ու Կանադայի տեղեկատվայնացման միջազգային ակադեմիայի միջեւ 17.12.2010թ. ստորագրվեց համագործակցության վերաբերյալ պայմանագիր: Կողմերի միջեւ համագործակցությունն ուղղված է լինելու ՀՀ Սյունիքի մարզի զարգացմանը, մի շարք՝ կրթության, առողջապահության, զբոսաշրջության, լեռնահանքային ու վերամշակման ոլորտներում ծրագրերի իրականացմանը: Ըստ ստորագրված փաստաթղթի՝ պալատն աշխատանքներ է իրականացնելու ներդրումների ներգրավման, միջազգային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպման, Հայաստանում նախագծերի իրագործմանը կանադական

առաջատար ընկերությունների եւ կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ: Կանադայի տեղեկատվայնացման միջազգային ակադեմիան (այն ՄԱԿ-ի Գերագույն խորհրդատվական ստատուսի (ԷԿՈՍՈՍ) կազմում գործող ոչ կառավարական կազմակերպություն է) նախատեսում է Հայաստանում գտնվող իր մասնաճյուղի միջոցով ՀՀ Սյունիքի մարզում ստեղծել լեռնահանքային եւ լեռնավերամշակման, կառավարման բնագավառների մասնագետների պատրաստման ու վերապատրաստման ուսումնական կենտրոն

- 6) Նախատեսվում է կառուցել Իրան-Հայաստան 12 դյույմ տրամագծով նավթամթերքների տեղափոխման խողովակաշարը: Աշխատանքների հիմնական մասը կիրականացվի Սյունիքի մարզի տարածքում
- 7) ՀՀ վարչապետի Իրան կատարած այցի շրջանակներում՝ իրանական գործարարների կողմից արտադրական ձեռնարկությունների ստեղծման, գյուղատնտեսական մթերքների, այդ թվում նաև Իրանից բերված կիսաֆաբրիկատ ապրանքների մշակման, փաթեթավորման և արտահանման նպատակով նախատեսվում է մարզում ստեղծել արդյունաբերական գոտի
- 8) Մարզի հիդրոէներգետիկ պոտենցիալի օգտագործմամբ 2011թ. նախատեսվում է կառուցել և շահագործել 15 նոր փոքր ՀԷԿ-եր:

2011թ. ՏԱՊ-ով նախատեսվում է իրականացնել նաև ՄԶԾ-ով չնախատեսված միջոցառումներ մասնավոր ներդրողների կողմից՝ 805.0 մլն դրամի չափով:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի արդյունաբերության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Արդյունաբերություն		805,000.0	805,000.00
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե			0.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ			0.00
համայնքային բյուջե			0.00

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

մասնավոր ներդրողներ		805,000.0	805,000.00
---------------------	--	-----------	------------

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2011 թվականին ՄԶԾ նպատակներից է Սյունիքի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

Այս բնագավառում նախատեսվող կարևոր միջոցառումների ընդհանուր գումարը 2011թ կկազմի շուրջ 966.9 մլն դրամ: Ներդրումներ են նախատեսված ՀՀ պետական բյուջեի, ինչպես նաև միջազգային և այլ դոնոր կազմակերպությունների միջոցներով: 2011թ միջոցառումները հիմնականում կուղղվեն տոհմային տնտեսությունների և հացահատիկային մշակաբույսերի սերմարտադրության զարգացման, ֆերմերային տնտեսություններին կերարտադրության, արհեստական սերմնավորման, կաթնարտադրության խթանման բնագավառներում, անասնապահության զարգացման և այլ ծրագրերում աջակցելու գործընթացներին:

2011թ կշարունակվի ոռոգման սեզոնում գոյություն ունեցող համակարգերի և ոռոգման կարիքների գույքագրումը և համակարգումը, էներգակիրների ծախսերի կրճատումը, համայնքներում ոռոգելի և խմելու ջրի վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրումը և դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցի կազմումը:

Կձեռնարկվեն միջոցառումներ իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովման ուղղությամբ: Ֆերմերների համար ներկայումս հրատապ է գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը: Այսօր ֆերմերներն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով կարևորվում է ժամանակակից պահանջներին համապատասխան Մեղրիի մեծածախ շուկայի ձևավորումը, որի ստեղծման գործընթացի համար 2011թ կշարունակվի մասնագիտական ուսումնասիրություններ ու վերլուծություններ:

Կուսումնասիրվի նաև մարզի տարածաշրջաններում գյուղատնտեսական ծրագրերի աջակցության գրասենյակների ստեղծման հարցը:

Աշխատանքներ կտարվեն գյուղատնտեսության ոլորտում ֆինանսական միջոցների և ներդրումների ավելացումն ապահովելու ուղղությամբ: Այս առումով անհրաժեշտ է առավել նպատակային օգտագործել Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվող «Գյուղատնտեսության բարեփոխումներին աջակցություն» նոր ծրագիրը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ նախատեսվող «Գյուղական տարածքների տնտեսական զարգացում» ծրագիրը, համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիրը:

Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալության կողմից Գորիսի տարածաշրջանի 16 համայնքներում կշարունակվի իրականացվել անասնապահության զարգացման ծրագրեր: 2011թ. ներդրումների ծավալը՝ նախատեսվում է տարեկան 162.0 մլն դրամ:

Ակցիա Սովի Դեմ միջազգային կազմակերպության կողմից կշարունակվեն Սիսիանի տարածաշրջանում իրականացվել կերարտադրության, արհեստական սերմնավորման և կաթնարտադրության զարգացման ծրագրերը: Ներդրումների չափը կկազմի շուրջ 33.2 մլն դրամ:

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, <<Շեն>> ԲՀԿ-ի միջոցով 2010թ. հաստատվել և 2011թ. կշարունակվի իրականացվել Մեդրիի շրջանի գյուղական զարգացման ծրագիրը: 2011թ. ներդրումների չափը կկազմի շուրջ 220.0 հազ ԱՄՆ դոլար:

Անասնապահությամբ մասնագիտացված Սյունիքի մարզում իրացման շուկայի մատչելիությանը և արտադրողի շահերի պաշտպանությանն ուղղված քայլ կարող է լինել 2011թ գյուղական համայնքներում կաթի հավաքման և նախնական վերամշակման կետերի և փոքր սպանդանոցների հիմնումը, որն արդեն քննարկվել է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության տարածաշրջանային գրասենյակների և <<Աշտարակ կաթ>> կազմակերպության հետ:

ՄԶԾ-ում նշված է, որ Սյունիքում գյուղատնտեսության զարգացման ոլորտներից մեկը կարող է դառնալ ծխախոտի հումքի արտադրությունը: Նախկինում մարզի նախկին շրջաններում այն որոշակիորեն զարգացած էր: Օրինակ՝ նախկին Ղափանի շրջանում 1983թ տվյալներով ծխախոտի ցանքատարածությունները կազմում էին 133հա, որից ստացվել էր 1654տ ծխախոտի հումք, միջին բերքատվությունը կազմում էր 12.4g: Այսօր հայրենական ծխախոտ վերամշակող և արտադրող ձեռնարկությունների առկայության պայմաններում սա հնարավոր տարբերակ է և արտադրանքի իրացումն ապահովված կլինի: 2010թ այն կազմել է 2հա, որից ստացվել է 0.6g բերք, միջին բերքատվությունը կազմել է 0.3g: 2011թ այն կհասցվի մոտ 4հա-ի:

Մի շարք գյուղական համայնքներում անհրաժեշտ է իրականացնել կրծողասպան /դեռատիզացիոն/ աշխատանքներ /գյուղապետարանների շենքերի, դպրոցների և մանկապարտեզների մասով/, որի համար 2011թ կտրվածքով կպահանջվի շուրջ 4.0 մլն դրամ գումար:

2011թ կշարունակվեն ֆերմերային տնտեսություններին մատուցվող խորհրդատվական ծառայությունների ընդլայնումը, դրանց մատչելիության բարձրացումը և առավել նպատակային ու հասցեավորված օգտագործումը: ՄԶԾ ռազմավարությունն այս ուղղությամբ ենթադրում է հետևյալ կարևոր միջոցառումների իրականացումը.

- 1) գյուղմթերքների արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների վերաբերյալ ուսուցողական-խորհրդատվական դասընթացների կազմակերպում
- 2) տնտեսավարման արդյունավետ ձևերի, մասնավորապես կոոպերացիայի տարբեր ձևերի վերաբերյալ սեմինարների անցկացում
- 3) խորհրդատվության տրամադրում ֆերմերներին՝ նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների վերաբերյալ
- 4) գյուղատնտեսությանը վերաբերվող մասնագիտական աշխատանքների մասին տեղեկատվական թերթիկների, բուկլետների մշակում

Աշխատանքներ կտարվեն նաև մարզի բոլոր տարածաշրջաններում հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ապահովման ուղղությամբ: 2011թ կշարունակվի համայնքներում տարբեր պատճառներով չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրման աշխատանքները: Արդյունքների մասին դրանք կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, կմշակվեն մեխանիզմներ՝ շրջանառությունից դուրս մնացած հողերի նպատակային օգտագործումն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով գյուղատնտեսության ոլորտում 2011թ. նախատեսվել էր իրականացնել 455.0 մլն դրամի ծրագրերը, այդ թվում ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ 350.0 մլն դրամի ծրագրեր և դոնորների միջոցներով և այլ աղբյուրներով՝ 105.0 մլն դրամի ծրագրեր: Նշված ծրագրերից ՀՀ պետական բյուջեով հաստատվել և 2011թ. ՏԱՊ-ում ներառվել են 175.5 մլն դրամի ծրագրեր, իսկ դոնորների միջոցներով և այլ աղբյուրներով՝ 910.0 մլն դրամի ծրագրեր:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի գյուղատնտեսության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2011թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Գյուղատնտեսություն	455,000.0	1,085,464.0	630,464.00
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	350,000.0	175,469.0	-174,531.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ	105,000.0	909,995.0	804,995.00
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

8. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև Սյունիքի մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

Բնապահպանության ոլորտում 2011 թվականին կշարունակվի օրենսդրությամբ ՀՀ Սյունիքի մարզպետին, մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և ոլորտի հանրապետական գործադիր ու այլ մարմինների տարածքային ստորաբաժանումներին վերապահված լիազորությունների կատարումը:

Սյունիքի մարզպետի կողմից կապահովվի՝

- 1) մասնակցություն բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում մարզի տարածքում դրանց իրականացումը
- 2) մարզի տարածքում բնապահպանական օրենսդրության կատարման վերահսկումը և խախտման փաստերի վերաբերյալ համապատասխան մարմիններին տեղեկացումը
- 3) աջակցություն արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը
- 4) համագործակցություն բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

2011 թվականին կշարունակվի Սյունիքի մարզում բնապահպանական իրավիճակի կառավարումը առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի միջոցով:

Հայաստանի հետ Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում Գերմանական KFW բանկի, ՀՀ բնապահպանության նախարարության հետ կնքված համաձայնագրի համաձայն 2010թ. հոկտեմբերի 11-ից մեկնարկել է Շիկահողի կենսոլորտային արգելոցի և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը: 2011-2013թթ. ծրագիրը կիրականացվի շուրջ 6.0 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի միջոցներով կշարունակվի «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» և «Չանգեզուր» պետական արգելավայրերի պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ֆինանսավորումը և այլն:

Ոլորտում կկատարվեն նաև հետևյալ աշխատանքները.

- 1) Կշարունակվեն ուսումնասիրությունները մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունման և իրականացման վերաբերյալ
- 2) Կշարունակվի բնօգտագործման և բնապահպանական վճարների գանձումը, այդ ոլորտում վճարման նոր համակարգի կիրառման հնարավորության ուսումնասիրությունը
- 3) Պոչամբարների և տարբեր պատճառներով լքված և չշահագործվող հանքավայրերի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը նպատակաուղղված ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացման խնդիրների ուսումնասիրությունը
- 4) Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ուժեղացումը, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացումը: Մասնավորապես կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը ընդհանուր տնտեսական զարգացման մեջ, անհրաժեշտ է աջակցել համայնքների նախաձեռնություններին՝ էկոտուրիզմի զարգացման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման նպատակով
- 5) Էկոլոգիական կրթության մեջ մարզի կրթական հիմնարկների, հանրակրթական դպրոցների, մարզի բնապահպանական ինստիտուցիոնալ համակարգի ներառումը:
- 6) Բնապահպանական խնդիրների լուծմանը նպաստող մարզի գազամատակարարման ցանցի որոշակի ընդլայնումը
- 7) Հողերի որակի և բերրիության չափորոշիչների մշակումը. որակյալ մոնիթորինգի, հողօգտագործման նորմավորման, հաշվառման և վերահսկողության համակարգի ձևավորումը:
- 8) Արոտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ կառավարման մեխանիզմների մշակումը:
- 9) Բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնումը
- 10) Համայնքային անտառկառավարման կիրառման հնարավորության ուսումնասիրումը մարզի անտառամերձ համայնքներում և դրան ուղղված քայլերի ձեռնարկումը:
- 11) Մարզի տարածաշրջաններում որսահանդակների ստեղծմանն ուղղված քայլերի ձեռնարկումը
- 12) Քաղաքային համայնքներում կեղտաջրերի մաքրման կայանների վերակառուցման հնարավորության ուսումնասիրությունը և համապատասխան քայլերի ձեռնարկումը
- 13) Կենցաղային կոշտ թափոնների կենտրոնացված աղբավայրերի կառավարման պլանների և վերամշակման համար բիզնես ծրագրերի մշակումը:

ՀՀ Այունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով բնապահպանության ոլորտում 2011թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել էր իրականացնել 85.7 մլն դրամի ծրագրերը: Նշված ծրագրերից ՀՀ պետական բյուջեով հաստատվել և 2011թ. ՏԱՊ-ում ներառվել են 50.0 մլն դրամի ծրագրեր:

2011թ. ՏԱՊ-ով նախատեսվում է իրականացնել նաև ՄԶԾ-ով չնախատեսված միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես գերմանական KFW բանկի և վայրի բնության համաշխարհային հիմնադրամի միջոցների հաշվին 569.0 մլն դրամ գումարով նախատեսվում է իրականացնել Շիկահողի կենսոլորտային արգելոցի և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը ու Խուստուփ արգելավայրի ստեղծման ծրագիրը:

Համայնքային բյուջեներով 2011թ. նախատեսվում է իրականացնել 8.8 մլն դրամի ներդրումներ:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի բնապահպանության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Բնապահպանություն	85,717.8	627,824.1	542,106.30
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	85,717.8	50,030.0	-35,687.80
միջազգային կազմակերպություններ և դոնորներ		569,000.0	569,000.00
համայնքային բյուջե		8,794.1	8,794.10
մասնավոր ներդրողներ			0.00

9. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ:

Սյունիքի մարզում 2010 թվականին արձանագրվեց բնագավառի առաջին լուրջ ձեռքբերումը՝ Տաթևի ճոպանուղին, որը բեկումնային կերպով արդեն սկսել է փոխել մարզի զբոսաշրջային նկարագիրը: 2010 թվականին իրականացվեց «Տաթևի վերածնունդ» նախագծի առաջին փուլը, որը նշանավորվեց աշխարհի ամենաերկար հետադարձ ճոպանուղու կառուցմամբ: Մեկնարկեց նաև վանական համալիրի վերակառուցումը, մասնավորապես, վերականգնվեց հնամենի ձիթարանը: Ծրագրերը կշարունակվեն մի քանի ուղղություններով. ենթակառուցվածքների զարգացում, զբոսաշրջային ապրանքների ներկայացում և 6 մերձակա գյուղերի ընդհանուր բարեկարգում: Ճոպանուղին արդեն կառուցվել և շահագործման է հանձնվել 2010 թվականի հոկտեմբերին: Այն բավականին լավ հնարավորություն է ստեղծել զբոսաշրջության զարգացման համար: Տաթևի համալիրի շուրջ ստեղծվելու է մի փոքր կլաստեր (համախումբ): Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների մեծ մասը մասնավոր ներդրումներ են, իսկ մի մասը /էլեկտրամոնտաժային աշխատանքներ, ճանապարհների կառուցում ու բարելավում եւ այլն/ կատարում է ՀՀ կառավարությունը: Վանքի վերանորոգման ծախսերն ակնկալվում է փակել հյուրանոցի եկամուտներով, իսկ ճոպանուղին կինքնաֆինանսավորվի տոմսերի վաճառքով: Ծրագրի իրականացման աշխատանքները կշարունակվեն մոտ 2 տարի և կավարտվեն 2012 թվականին: Ըստ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հաշվարկների՝ 2008 թվականին Տաթև է այցելել մոտ 7000 զբոսաշրջիկ, իսկ 2010 թվականի արդյունքներով ճոպանուղին արդեն տեղափոխել է մոտ 9000 ուղևոր, որոնց 30 տոկոսն են կազմում տեղաբնակները: Փաստորեն ճոպանուղու առաջացրած հետաքրքրությունն արդեն սկսել է ավելացնել ու բազմապատկել այդ թիվը: Տաթևի վանքի վերականգնման ծրագիրը և վերածնունդը, ինչպես նաև վանքի մոտակայքում տուրիստական համալիրի ստեղծումը, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում զբոսաշրջության զարգացման խթան կհանդիսանա, քանի որ Երևանից մինչև Տաթև զբոսաշրջիկները հնարավորություն կստանան մեկ երթուղու վրա այցելել Խոր Վիրապ, Նորավանք, Զորաց քարերի աստղադիտարան, Տաթև և այլն:

Միաժամանակ 2011 թվականին կմեկնարկի զբոսաշրջության զարգացման ծրագիրը երկրի հյուսիսում՝ «Հյուսիսային միջանցք», որը Լոռիից կձգվի մինչև Գորիս, այնուհետև՝ Տաթև: Կկատարվեն անհրաժեշտ ներդրումների հաշվարկներ և համապատասխան աշխատանքները կմեկնարկեն: 2011 թվականին «Տաթևի վերածնունդ» ծրագրի իրականացման շրջանակներում կավարտվի մերձակա տարածքների բարեկարգումը, կստեղծվեն հանգստի գոտիներ, կկառուցվի հյուրանոցային համալիր: Ծրագրի արժեքը կկազմի շուրջ 1.0 մլն ԱՄՆ դոլար:

2010 թվականին ներդրումների չափը կազմել է շուրջ 13 մլն. եվրո, որը հիմնականում ուղղվել է Հալիձոր-Տաթև ճոպանուղու կառուցմանը և սարքավորումների ձեռքբերման աշխատանքներին:

Վերոնշյալ ծրագրի իրականացման համատեքստում ավելի արդիական է դառնում Սյունիքի մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կհասնի ցանկալի արդյունքի և այն կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին: 2011 թվականին նույնպես կընթանան այս ծրագրի մշակման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման, մարզի զբոսաշրջային տնտեսության գույքագրման և տվյալների բազայի ստեղծման աշխատանքներ:

2011 թվականին ոլորտում կիրականացվեն նաև հետևյալ աշխատանքները.

- 1) Ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով ՀՀ Սյունիքի մարզի որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրամասի նկարագրի ձևավորմանն ուղղված միջոցառումները, մարզի ինտերնետային կայքում զբոսաշրջությանն առնչվող տվյալների տեղադրումը
- 2) Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում Սյունիքի զբոսաշրջային գրավչության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացումը
- 3) Համայնքահեն Տուրիզմի զարգացման խթանումը
- 4) Համագործակցությունը ՓՄՁ զարգացմանն աջակցող կազմակերպությունների միջև:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի վեր հանել ՓՄՁ զարգացման այլ կարիքներ, որոնք կհոգան ՓՄՁ Ջարգացման ազգային կենտրոնը և այլ դոնոր կազմակերպություններ՝ նման կլաստերների ստեղծման և զարգացման հետագա ընթացքում:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով զբոսաշրջության ոլորտում 2011թ. այլ աղբյուրներով նախատեսվել էր իրականացնել 375.0 մլն դրամի ծրագրեր: 2011թ. ՏԱՊ-ում ներառվել է «Տաթևի վերածնունդ» ծրագրի իրականացումը շուրջ 365.0 մլն դրամ գումարով:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Զբոսաշրջություն	375,000.0	365,000.0	-10,000.00
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե			0.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ	375,000.0	365,000.0	-10,000.00
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

10. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2011 թվականին քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված կլինեն մարզի ուսումնական հաստատությունների, մշակութային և առողջապահական օբյեկտների կառուցման ու հիմնանորոգման, ջրամատակարարման համակարգի բարելավման, զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման, մարզի համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության վերահսկողության հետ:

Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ: Մարդկային աղքատության հետ առնչվող հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մարզի մարդկային աղքատության հաղթահարման գերակայություններն առնչվում են նաև բնակչության բնակարանային ապահովման հետ:

Կշարունակվեն նաև զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Նախատեսվում է 2011 թվականին շարունակել Կապան քաղաքում երիտասարդ ընտանիքների համար կառուցվող, 330 բնակարանոց, 3 շենքերի շինարարությունը:

2011թ. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մարզում կիրականացվեն 107.24 մլն դրամի շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ Կապանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում՝ 51.12 մլն դրամ և Սիսիանի ջրային հայելիների սանիտարական մաքրում և բարեկարգում՝ 56.12 մլն դրամ գումարով:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցով նախատեսվում է կառուցել Կոռնիձորի համայնքային կենտրոնի ջեռուցման համակարգը՝ 4.9 մլն դրամ գումարով:

Դատաիրավական բարեփոխումներ: ՀՀ արդարադատության նախարարության միջոցով կսկսվի Գորիսի նոր քրեակատարողական հիմնարկի կառուցումը, որի համար 2011 թվականին նախատեսված է 1,035 մլրդ դրամ: Համաշխարհային բանկի աջակցությամբ կսկսվեն Կապանի դատարանի շենքի կառուցում և գույքի ձեռք բերման աշխատանքները՝ 347.9 մլն դրամ գումարով:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով քաղաքաշինության ոլորտում 2011թ. նախատեսվել էր ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնել 1041.4 մլն դրամի ծրագրերը: Նշված ծրագրերից ՀՀ պետական բյուջեով հաստատվել և 2011թ. ՏԱՊ-ում ներառվել են 1439.0 մլն դրամի ծրագրեր:

2011թ. ՏԱՊ-ով նախատեսվում է իրականացնել նաև ՄԶԾ-ով չնախատեսված միջոցառումներ միջազգային կազմակերպությունների կողմից՝ 1060.3 մլն դրամ գումարով:

Համայնքային բյուջեներով 2011թ. նախատեսվում է իրականացնել բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության բնագավառում 41.5 մլն դրամի ներդրումներ:

**Համեմատական
ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի
քաղաքաշինության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան
աշխատանքային պլանի**

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Քաղաքաշինություն	1,041,387.0	2,540,826.2	1,499,439.20
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	1,041,387.0	1,438,987.0	397,600.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ		1060300.0	1,060,300.00
համայնքային բյուջե		41,539.2	41,539.20
մասնավոր ներդրողներ			0.00

11. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ճանապարհաշինություն: ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ճանապարհաշինության ոլորտում 2011թ. նախատեսվել էր ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացնել 2694.8 մլն դրամի ծրագրերը: Նշված ծրագրերից ՀՀ պետական բյուջեով հաստատվել և 2011թ. ՏԱՊ-ում ներառվել են 513.4 մլն դրամի ծրագրեր:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ճանապարհաշինության ոլորտի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Ճանապարհաշինություն	2,694,800.0	513,379.0	-2,181,421.00
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	2,694,800.0	513,379.0	-2,181,421.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ			0.00
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

Ջրամատակարարում: ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ջրամատակարարման ոլորտում 2011թ. նախատեսվել էր միջազգային և դոնոր կազմակերպությունների միջոցներով իրականացնել 625.3 մլն դրամի ծրագրեր: Նշված ծրագրերից 2011թ. ՏԱՊ-ով կիրականացվեն 6.2 մլն դրամի ծրագրեր:

ՀՀ պետական բյուջեով հաստատվել և 2011թ. ՏԱՊ-ում ներառվել են 1022.0 մլն դրամի ծրագրեր:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Ջրամատակարարում	625,300.0	1,028,225.0	402,925.00
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե		1,022,020.0	1,022,020.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ	625,300.0	6,205.0	-619,095.00
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

Գազիֆիկացում: ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով գազիֆիկացման ոլորտում 2011թ. ներդրումներ չէին նախատեսվել: Սակայն ՄՁԾ 2010թ. ներառված և 2010թ. ընթացքում չիրականացված ծրագրերի չափը կազմում է 1732.0 մլն դրամ: Չիրականացված ծրագրերից <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման>> ԾՎԿԳ միջոցով մարզում 2011թ. նախատեսվում է իրականացնել 397.0 մլն դրամի գազիֆիկացման աշխատանքներ՝ Խոզնավար 129.0 մլն դրամ, Խնածախ 130.0 մլն դրամ, Վաղատուր 68.0 մլն դրամ, Սպանդարյան 70.0 մլն դրամ համայնքներում:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի գազիֆիկացման ոլորտում 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Գազիֆիկացում	0.0	397,000.0	397,000.00
<i>որից՝</i>			

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀՀ պետական բյուջե			0.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ		397,000.0	397,000.00
համայնքային բյուջե			0.00
մասնավոր ներդրողներ			0.00

12. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

12.1. Տարածքային կառավարում

ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1795 որոշմամբ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի N329-Ն որոշմամբ ենթարկվեց փոփոխությունների: 2010 թվականին այս փոփոխությունների դիմամիկան փոքր ինչ շարունակվեց՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի N718-Ն որոշմամբ մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը վերակազմավորվեց ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի: Մարզպետարանի կառավարման գործող կազմակերպական կառուցվածքը հնարավորություն է տալիս հիմնականում լուծելու առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնելու մարզպետի լիազորությունները: Չնայած դրան, փոփոխությունների դիմամիկան կարող է էլի շարունակվել, քանի որ համակարգն անընդհատ պետք է հարմարեցվի գոյություն ունեցող զարգացումներին:

Մարզի զարգացման ծրագրի իրականացումը դիտարկելու և հսկելու համար մարզպետարանում ձևավորված մոնիտորինգի և գնահատման համակարգը 2011 թվականին կշարունակի գործել: Այն ներկայացված է ՏԱՊ-ի «14.Մոնիտորինգի և գնահատման համակարգ» բաժնում:

Էլեկտրոնային կառավարման բնագավառում հետևյալ պատկերն է՝ Սյունիքի մարզպետարանը հիմնականում ապահովված է ժամանակակից համակարգչային սարքավորումներով, ինտերնետ կապով, ինտերնետում ներկայացված է պաշտոնական կայքէջով (<http://syunik.region.am>), մարզպետարանի փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Mulberry էլեկտրոնային կառավարման համակարգով:

2011 թվականին կշարունակվի մարզպետարանի՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածության գործընթացը, կբարելավվի ինտերնետ կապի որակը, կշարունակվեն տվյալների բազայի համակարգման, տվյալների թարմացման, ինչպես նաև դրանցից օգտվելու մեխանիզմների մշակման աշխատանքները: 2010 թվականին փաստաթղթաշարժի գերակշիռ մասն իրականացվեց Mulberry էլեկտրոնային կառավարման համակարգով: 2011 թվականին նույնպես մարզպետարանը կաշխատի այս համակարգով:

Սյունիքի մարզում 2011 թվականին կշարունակվեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հիմքերի ամրապնդմանն ուղղված միջոցառումները:

Տարածքային կառավարման բնագավառում 2011 թվականին Սյունիքում կիրագործվեն հետևյալ միջոցառումները.

- 1) Մարզպետին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության և

հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության և շրջական միջավայրի պահպանության բնագավառներում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացում, ոստիկանության և ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում

- 2) Սյունիքի մարզպետարանի, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի փոխհարաբերությունների շարունակական կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացում
- 3) Մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգի մշակում, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բանկ, որը կհանդիսանա մարզային կյանքի բոլոր բնագավառների համար պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը: 2011 թվականին մարզպետարանը կհամագործակցի մարզային բոլոր կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման ու անցկացման աշխատանքների իրականացման գործում:
- 4) Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնության, դրա տրամադրման մեխանիզմների հստակեցում և դրանց արդյունավետության բարձրացում
- 5) Մարզային զարգացման գործընթացներում Սյունիքի մարզի խորհրդի դերը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օրենսդրական հիմքեր ապահովելու նպատակով Սյունիքի մարզի խորհրդի գործող իրավասությունների շրջանակի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում
- 6) Մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացմանն ուղղված միջոցառումներ (Սյունիքի մարզպետարանում կուտակվել է մեծ փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար)
- 7) Պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմների մշակում:

12.2. Տեղական ինքնակառավարում

2011 թվականին նույնպես, մարզի 109 համայնքներում կարևորագույն խնդիր է

շարունակում հանդիսանալ համայնքների կարողությունների շարունակական բարձրացումը, որի կարևոր գործոններից է համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացումը: 2011 թվականին կշարունակվեն համայնքների բյուջեների սեփական եկամուտների լիարժեք հավաքագրմանն ուղղված քայլերը:

2010 թվականին, վարչատարածքային բարեփոխումների իրականացման նպատակով, համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման հայեցակարգի համաձայն, ՀՀ վարչապետի 2009 թվականի մայիսի 26-ի N427-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի համայնքների խոշորացման հարցերի աշխատանքային խմբի քննարկմանն են ներկայացվել Սյունիքի մարզի Թասիկ և Թանահատ, ինչպես նաև Կուրիս, Գուդեմնիս ու Վահրավար գյուղական համայնքների միավորման՝ համապատասխան համայնքների ավագանիների որոշումներով հավանության արժանացած առաջարկությունները: Խնդիրը քննարկման փուլում է:

Մարզի բոլոր 109 համայնքների քառամյա զարգացման ծրագրերում ընդգրկված ոլորտային կապիտալ ծրագրերի իրականացման համար պահանջվող գումարը կազմում է շուրջ 24,48 մլրդ դրամ: Համայնքների մի շարք հիմնախնդիրներ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնահատվել են առավել առաջնահերթ, որոնց լուծման համար պահանջվող ընդհանուր գումարը կազմում է շուրջ 4.66 մլրդ դրամ: 2011 թվականին նույնպես մարզպետարանի ուշադրության կենտրոնում կլինի համայնքային զարգացման ծրագրերի իրականացումը: Առավելապես ուշադրություն կդարձվի համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ) վերականգնմանն ուղղված ծրագրերի վրա:

Տեղական ինքնակառավարման բնագավառի 2011 թվականի գերակայություններն են.

- 1) Ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը
- 2) Նպաստել միջհամայնքային համագործակցության ընդլայնմանը, մարզի առանձին համայնքների միավորմանը
- 3) Շարունակել աջակցությունը համայնքներին՝ առկա առաջնահերթ հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման գործում:

2011 թվականին՝

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի հրամանի համաձայն մարզի համայնքներում կշարունակվի իրականացվել վարչական հսկողություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ:

Միաժամանակ իրավական հսկողություն կիրականացվի համայնքներից ստացված ավագանիների բոլոր որոշումների նկատմամբ: Կպահովվեն ոչ իրավաչափ որոշումների նկատմամբ տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

Կապահովվեն մարզի համապատասխան համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները՝ համաձայն կազմված ժամանակացույցի: Կազմակերպական օժանդակություն ցույց կտրվի մարզի ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ու համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման՝ օրենքով սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն, ինչպես նաև դրանց հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ:

Մեթոդական օժանդակություն կցուցաբերվի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների ստանձնման ու գործունեության կազմակերպման հարցերում:

Մարզպետարանը, սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում ընթացք կտա տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերին, անհրաժեշտության դեպքում համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ կներկայացնի «Կառավարություն և «Նախարարություններ»:

Համակարգված աշխատանքներ կտարվեն համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության մասին «Օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանի՝ ըստ տարածաշրջանների, համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների հետ պարբերաբար կանցկացվեն աշխատանքային խորհրդակցություններ, որոնց ընթացքում կքննարկվեն համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության, թափուր պաշտոնների համալրման, մրցույթների և ատեստավորման գործընթացների կազմակերպման, համայնքային ծառայողների անձնական գործերի վարման և համայնքային ծառայության մասին «Օրենսդրությամբ սահմանված մյուս գործառույթների պատշաճ կատարման հարցերը:

2011թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է համայնքային ծառայության 399 պաշտոն, մարզում ավարտվել են համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման աշխատանքները, առաջին վերապատրաստում է անցել 31 համայնքային ծառայող: Թափուր պաշտոնների համալրման գործընթացը կշարունակվի համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով: 2011 թվականին թափուր պաշտոնների համալրման համար կապահովվեն համայնքների կողմից մրցույթների հայտարարման և անցկացման գործընթացները, անհրաժեշտության դեպքում օժանդակություն կցուցաբերվի առանձին համայնքներին՝ «Համայնքային ծառայության մասին» «Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն, «Տարածքային կառավարման նախարարության համաձայնությամբ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերի՝ բարձրագույն կրթության և աշխատանքային ստաժի պահանջների իջեցման վերաբերյալ «Տարածքային կառավարման նախարարություն միջնորդություններ ներկայացնելու հարցում:

Կապահովվի համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը, աջակցություն կցուցաբերվի համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների թարմացման և ճշգրտման աշխատանքներին:

2011 թվականին աշխատանքներ կտարվեն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով նրանց հետ, ըստ տարածաշրջանների, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից կշարունակվեն անցկացվել խորհրդատվական բնույթի սեմինարներ և խորհրդակցություններ:

Սեփական և արտաքին միջոցների ներգրավմամբ մարզի 70 գյուղական համայնքներ արդեն ապահովված են համակարգչային տեխնիկայով, իսկ 60 համայնքներում մշտապես գործում է ինտերնետային կապ: Համայնքների հետ էլեկտրոնային հեռահաղորդակցման ապահովման ու տեղեկատվության փոխանակման օպերատիվության նպատակով մարզպետարանի օժանդակությամբ բոլոր 109 համայնքներն ունեն էլեկտրոնային հասցեներ: 2011 թվականին կշարունակվեն աշխատանքներ տարվել մարզի մյուս համայնքների ղեկավարների աշխատակազմերի տեխնիկական վերազինման ուղղությամբ:

Համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման նպատակով կշարունակվի ավագանիներին համապատասխան շենքային պայմաններով ապահովելու գործընթացում համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը:

Մարզի համայնքներում հանրային իրազեկման գործընթացն արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով կշարունակվեն ձեռնարկվել միջոցներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Մարզպետարանի կայքում պարբերաբար կհրապարակվեն համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումները, համայնքների ղեկավարների գործունեության վերաբերյալ տարեկան և ընթացիկ հաշվետվությունները:

2011 թվականին մեծ ուշադրություն կդարձվի նաև համայնքների զարգացման քառամյա ծրագրերի կատարմանը: Քառամյա զարգացման ծրագրերի կատարմանն կուղղվեն շուրջ 7050.7 մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝ համայնքային բյուջեների հատկացումներ՝ 369.1 մլն դրամ, ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ 1328.7 մլն դրամ և միջազգային ու դոնոր կազմակերպությունների հատկացումներ՝ 5352.9 մլն դրամ: ՄԶԾ-ով 2011թ. նախատեսվել էր իրականացնել 6301.6 մլն դրամի ծրագրեր, որից ՀՀ պետական բյուջեից՝ 2636.6 մլն դրամ, համայնքային բյուջեից, միջազգային և դոնոր կազմակերպություններից՝ 3665.0 մլն դրամ:

12.3. Քաղաքացիական հասարակություն

2011 թվականին նույնպես տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի հասարակության մի մասի՝ մարզում ընթացող գործընթացների նկատմամբ կրավորական և սպասողական դիրքորոշման աստիճանական վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային և համայնքային զարգացման գործընթացներին: Այս հարցը լուծելու համար օրենսդրության առումով բավարար պայմաններ կան, խնդիրը մարդկանց որոշակի հատվածի հոգեբանության, հոգեկերտվածքի և մտածողության վերափոխման մեջ է, որը պետք է իրականացվի պետական, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան քայլերի շնորհիվ:

2011 թվականի ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, ՏԻՄ-երի և մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է շարունակել հետևյալ միջոցառումները.

- 1) Մարզի տարածքում գործող ՁԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրություններ՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ
- 2) Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանում այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ
- 3) Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ ավելի մասնակից դարձնել մարզի խորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին
- 4) Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքների ավագանիների նիստերին
- 5) Համայնքներին խրախուսելու համար և կապված տեղական ինքնակառավարման համակարգի 15-ամյակի հետ, մարզպետի կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մեջ նախատեսել նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման օրեր, անցկացնել «Տարվա լավագույն համայնք», «Լավագույն ավագանի», «Լավագույն համայնքի ղեկավար», «Լավագույն մարզ», «Լավագույն մարզպետ»

մրցանակաբաշխությունները՝ խրախուսել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտներում 15 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատակիցներին և համայնքների՝ տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումից առ այսօր անընդմեջ ընտրված և աշխատած ղեկավարներին, սահմանել «Համայնքի հիմնախնդիրների լավագույն ներկայացում» մրցանակ և այն շահած համայնքին (համայնքներին) պետական բյուջեի միջոցներով կամ դրամաշնորհներով օժանդակություն ցույց տալ նշված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ

- 6) կազմակերպել միջոցազուրկ ուղղված համայնքների բնակիչների շրջանում իրավունքների և պարտականությունների մասին իրազեկության բարձրացմանը
- 7) Իրականացնել ծրագրեր՝ ուղղված քաղաքացիների մասնակցության խթանմանը:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներ ոլորտներում 2011թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել էր իրականացնել 136.0 մլն դրամի ծրագրերը, Նշված ծրագրերից ՀՀ պետական բյուջեով 2011թ. հատկացումներ չեն լինելու: Միջազգային կազմակերպությունների և դոնորների միջոցներով մարզում կիրականացվեն 36.8 մլն դրամի ծրագրեր:

Համեմատական

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներ բնագավառի 2011թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(հազ. դրամ)

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2011թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
1	2	3	4
Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն, արտակարգ իրավիճակներ	136,000.0	36,820.0	-99,180.00
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	136,000.0		-136,000.00
միջազգային կազմակերպություններ և դոնորներ		36,820.0	36,820.00
համայնքային բյուջե			0.00

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄՁԾ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

մասնավոր ներդրողներ				0.00
---------------------	--	--	--	------

13. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2011 թվականին կշարունակվեն միջոցառումներ ուղղված արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանությանը: Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրները մշտապես կգտնվեն մարզպետարանի ուշադրության կենտրոնում: Միջոցներ կծեռնարկվեն մարզում բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման համար պահանջվող միջոցառումների պատշաճ իրականացման համար:

2011 թվականի ընթացքում Սյունիքի մարզպետարանի կողմից կազմակերպական առումով օժանդակություն ցույց կտրվի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների 2011 թվականի ուսուցման պլանի համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ինստիտուտում վերապատրաստվող աշխատակիցներին:

Ոլորտում առաջնահերթ հիմնախնդիր է շարունակում մնալ քարաթափերի կանխարգելման հարցը: Հիմնախնդրի լուծման հարցում ՀՀ Սյունիքի մարզպետարանը կիրականացնի հետևյալ գործառույթները.

- 1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ բնագավառի համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին տեղեկատվության ներկայացում՝ քարաթափերի, դրանց հետ կապված արտակարգ իրավիճակի կամ վտանգի մասին
- 2) անվտանգության ապահովմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների կազմակերպում
- 3) գույքագրման, միջոցառումների ծրագրերի մշակման և համապատասխան ոլորտի պատասխանատու լիազոր մարմնին ներկայացման աշխատանքների կազմակերպում
- 4) ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող աշխատանքների իրականացման կազմակերպում:

14. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԶԾ համար կարևորվում է 2011 թվականին իրականացվելիք միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար: Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետի 2009թ. փետրվարի 11-ի N25-Ա որոշմամբ հաստատվել է մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կազմը, որտեղ ընդգրկվել են մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խմբի ղեկավարը Սյունիքի մարզպետի տեղակալն է: ՄԳ համակարգը կվերահսկի ՏԱՊ-ի կատարումը և կամփոփի 2011 թվականի գործունեության արդյունքները:

ՄԶԾ մոնիտորինգի համակարգը ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները կպատրաստվեն մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

Միջանկյալ հաշվետվությունը կներառի տրամաբանական հենքի հիման վրա կատարված քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն կմշակվի 2010 թվականի առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը կպատրաստվի 2011 թվականի հուլիս ամսին:

Տարեկան հաշվետվությունը կամփոփի տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն կպատրաստվի 2012 թվականի հունվար ամսին և կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

- 1) ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները, դրանց գծով կատարված ծախսերը, արդյունքները,
- 2) Հաջորդ տարվա հիմնախնիդրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

